ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվարի 06-10-ը Ավստրիայի Հանրապետություն /Վիեննա/
գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2024թ. փետրվարի 06-10-ը

3. Հրավիրող կողմը.

ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՄԱԱԶԿ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցելով «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի որոշ երկրներում արդյունաբերական արտադրության վիճակագրության կատարելագործում և արդյունաբերության մրցունակության ցուցանիշների զարգացում՝ վերլուծության համար՝ քաղաքական տեսանկյունից կարևոր որոշումներ ընդունելու նպատակով» տարածաշրջանային ծրագրի (SAP – 190319) շրջանակում կազմակերպված ճանաչողական սեմինարին՝ քննարկել ծրագրի շրջանակում Արմստատի անելիքները և կարիքները:

5. Քննարկված թեմաները.

- **Արդյունաբերության արդյունավետության ցուցանիշները:**
- **Արտադրողականություն**. արտադրողականության հաշվարկում էկոնոմետրիկ կամ մաթեմատիկական մոդելներից ստացված գնահատականների միջոցով:
- **Թվայնացում և նորարարություն**. հաշվի առնելով դրանց կարևոր նշանակությունն արտադրողականության աճի, մրցունակության բարձրացման և երկարաժամկետ տնտեսական աճի խթանման գործում՝ թվայնացման և նորարարության վիճակագրության կատարելագործում, որը կարող է ծառայել որպես ուղեցույց արդյունաբերության ոլորտում քաղաքականություն մշակելիս:
- **Գենդերային հավասարություն**. արդյունաբերության ոլորտում տղամարդկանց և կանանց զբաղվածության ու նրանց աշխատավարձի միջև անհավասարության վերացման

նպատակով հաշվառման համապասխան համակարգի և անհրաժեշտ տվյալների բազաների ձևավորում:

- **Տվյալների նոր աղբյուրներ**. մեծ տվյալներ (Big Data), վարչական տվյալներ և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Սեմինարին մասնակցում էին 9 երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առաջին օրը բացման խոսքով հանդես եկան ՄԱԱՀԿ վիճակագրության պետ Ֆերնանդո Կանտուն և ՄԱԱՀԿ խորհրդատուներ Նատալյա Ուստինովան և Շիամ Ուպադհյայան:

Սեմինարի ընթացքում օժանդակություն ստացող երկրների ազգային վիճակագրական ծառայությունների, ինչպես նաև ԵՏՀ վիճակագրության վարչության և ԱՊՀ վիճակագրության կոմիտեի (CIS-STAT) կողմից ներկայացվեցին «Արդյունաբերության վիճակագրություն» թեմայով թվով 11 շնորհանդեսներ՝ ներկայացնելով ներկա վիճակը, ձեռքբերումները, կարիքները և ապագա անելիքները:

ՄԱԱՀԿ ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին հետևյալ շնորհանդեսները՝

✓ **Արդյունաբերության արդյունավետության ցուցանիշներ.**

- ինչու՞ չափել արդյունաբերական ցուցանիշները,
- փոփոխվող արդյունաբերական լանդշաֆտը,
- փաստացի տվյալների հիման վրա արդյունաբերական քաղաքականության մշակման համար տվյալների կարիքները,
- արդյունաբերության մրցունակության ինդեքսը (CIP),
- ԿՀՆ 9 ոլորտային ցուցանիշները,
- ապագա ուղղությունները. արդյունաբերական նոր միտումները:

✓ **Ծրագրի իրականացման պլանի վերանայում.**

- սեմինարի նպատակներն ու խնդիրները,
- ակնկալվող արդյունքները և նախատեսվող միջոցառումները,
- տվյալների առկայություն ըստ երկրների,
- մեթոդաբանական համագործակցության նոր թեմաները, մասնավորապես՝ արտադրողականություն, թվային տնտեսություն, գենդերային հավասարություն և փոքր ու միջին արդյունաբերական կազմակերպությունների բարելավված վիճակագրություն:

Սեմինարի ընթացքում ձևավորվեցին վերը նշված թեմաներին համապատասխան 4 աշխատանքային խմբեր, որոնք կհամակարգեն նշված ուղղություններով վիճակագրական համակարգերի զարգացումները: Հաշվի առնելով 2023թ-ին Արմստատի կողմից իրականացված «Տնտեսավարող սուբյեկտների կողմից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման և էլեկտրոնային առևտրի

մասին» հետազոտության ընթացքում ձեռք բերված փորձը՝ Արմստատը ընդգրկվեց «Թվային տնտեսություն» խմբում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք է բերվել պայամանավորվածություն աշխատանքային խմբերի շրջանակում շարունակել վիճակագրական համապատասխան համակարգերի զարգացմանն ուղղված աշխատանքները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մասնակցությունն սեմինարին հնարավորություն է ընձեռել ուսումնասիրել մասնակից երկրների արդյունաբերության վիճակագրության վարման փորձը, մեթոդաբանական առանձնահատկությունները, ներկայացնել դրա բարելավմանն ուղղված կարիքները, քննարկել նախատեսվող միջոցառումների առաջնահերթությունները և ծրագրի շրջանակում ապագա անելիքները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

13.02.2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը – ՀՀ վարչապետի 16.01.2024թ. N 42-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

   Ստեփան Մնացականյան – ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ
4. Գործուղման վայրը- Ավստրիայի Հանրապետություն /Վիեննա/
5. Գործուղման ժամկետները՝ 06-10 փետրվարի 2024թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը – ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՄԱԱԶԿ)

2) (թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

---

3) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն 1	Անուն, ազգանուն 2	Անուն, ազգանուն 3	Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					

	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հայրապետյան

13.02.24թ.